

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ
ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

Հանրային պաշտպանություն է համարվում օրենքով նախատեսված դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակը հանդիսանում է փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում և հիմնադրվել է սոցիալապես անապահով խավերին օրենքով նախատեսված կարգով ու դեպքերում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար:

Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատող հանրային պաշտպանը փաստաբան է, ով գործում է գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի հետ կնքած աշխատանքային պայմանագրի հիման վրա:

Հանրային պաշտպանների կողմից իրավաբանական օգնություն իրականացնելու որակի և ժամկետների նկատմամբ հսկողություն է իրականացնում հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը, ով լիազորություն ունի փաստաբանների պալատի նախագահին միջնորդություն ներկայացնել հանրային պաշտպանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության նկատմամբ վերահսկողություն է իրականացնում փաստաբանների պալատի նախագահը:

Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգն ընդունում է, ինչպես նաև դրանում լրացումներ և փոփոխություններ է կատարում Փաստաբանների պալատի խորհուրդը:

Հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, որը պետք է ապահովի հանրային պաշտպանի գրասենյակի բնականոն գործունեությունը:

Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝

1) խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում.

2) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

Ներկայացուցչությունը կամ պաշտպանությունն իրականացվում է քրեական գործով մինչդատական վարույթում, Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում:

Քրեական գործերով անվճար իրավաբանական օգնությունն իրականացվում է վարույթն իրականացվող մարմնի որոշման հիման վրա հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից հանրային պաշտպանի նշանակման միջոցով:

Քրեական վարույթն իրականացնող մարմինը ՀՀ փաստաբանների պալատից պահանջում է փաստաբանին նշանակել պաշտպան՝

1) կասկածյալի կամ մեղադրյալի միջնորդությամբ.

2) այն դեպքում, երբ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ կասկածյալը կամ մեղադրյալը պաշտպան չունի:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ քրեական գործերով հանրային պաշտպանն իր գործունեությունը ծավալում է նախաքննության մարմնում և դատական ատյաններում:

Հանրային պաշտպանը գործը ստանձնելուց հետո ձեռնամուխ է լինում նախ՝ նյութերի ծանոթացման գործընթացին, եթե այդպիսիք տվյալ պահին առկա են, կոնկրետ գործով միասնական մարտավարություն մշակելու նպատակով տեսակցում է ինչպես ազատության մեջ, այնպես էլ կալանավայրերում գտնվող պաշտպանյալների հետ, հավաքում է բոլոր անհրաժեշտ ապացույցները, կազմում է անհրաժեշտ փաստաթղթերը՝ նախաքննության մարմին, դատարան կամ պահանջվող այլ վայրեր ներկայացնելու համար և այլն: Այսինքն, կատարում

է բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են իրեն հաճնարարված քրեական գործով:

Իր իրավավիճակը հաստատելու համար հանրային պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև հանրային պաշտպան նշանակելու վերաբերյալ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումը:

Հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպանների վարած՝ վարույթն ավարտած քրեական գործերի վերաբերյալ հաշվետվությունները կիսամյակի կտրվածքով տեղադրվում են փաստաբանների պալատի պաշտոնական կայքում:

Մարինե Տարմանյան

«Փաստաբանների պալատի

Երիտասարդական խորհուրդ